



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 66595 գործարքներ, որոնց քանակը 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 4.0%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 10.0%-ով:

2007թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 26790 օտարման գործարքների 87.2% կազմել են առուվաճառքները, 12.2%՝ նվիրատվությունները և 0.6%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 31.9%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.6% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. առաջին կիսամյակում, 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 3.3%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 13.6%-ով: 2007թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7029 առուվաճառքի գործարքների 66.8% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.5%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 0.4%-ով:

2007թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2006թ.	առաջին կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2006թ.
Կենտրոն	361300	433600	392500
Արաբկիր	283600	343400	312000
Քանաքեռ-Զեյթուն	172100	247200	199800
Նոր-Նորք	160900	215700	180500
Ավան	142800	200900	168800
Էրեբունի	140600	211400	170500
Շենգավիթ	172400	226500	192900
Դավթաշեն	176900	233100	200800
Աջափնյակ	161500	217500	181400
Մալաթիա-Սեբաստիա	158300	205400	174800
Նուբարաշեն	102700	120200	113400
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	184800	241300	207900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. առաջին կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 16.1%, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 30.6%:

2007թ. առաջին կիսամյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. առաջին կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2895 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 5.7%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 12.8%-ով:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի

շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2006թ.	առաջին կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	56900	96500	73900
	Ապարան	24900	28500	26600
	Թալին	23000	34200	27400
Արարատ	Արտաշատ	43700	76600	58550
	Մասիս	53200	84700	67500
	Վեդի	36700	55600	46200
	Արարատ	38800	54000	46200
Արմավիր	Վաղարշապատ	77300	118000	95500
	Արմավիր	49500	83100	65300
	Մեծամոր	31800	54000	42600
Գեղարքունիք	Սևան	32400	55500	42800
	Գավառ	24000	32900	28300
	Մարտունի	37700	48000	40600
	Վարդենիս	19700	25700	22200
	Ճամբարակ	12400	14300	13600
Լոռի	Վանաձոր	45100	66600	56200
	Ստեփանավան	23600	32700	26900
	Մայիտակ	30600	43400	39000
	Ալավերդի	19600	24050	21900
	Տաշիր	19700	23200	20900
	Թումանյան	5300	5400	5400
	Շամլուղ	2800	3000	3000
	Ախթալա	10400	11400	10800
Կոտայք	Աբովյան	86000	134400	110100
	Նոր Հաճն	58800	92600	74540
	Բյուրեղավան	40500	66200	53300
	Եղվարդ	53800	83100	68600
	Հրազդան	34400	46600	40600
	Ծաղկաձոր	68000	86050	77500
	Չարենցավան	38000	55800	47500
Շիրակ	Գյումրի	46100	63700	54400
	Արթիկ	28300	41900	34800
	Մարալիկ	21400	24400	22400
Սյունիք	Գորիս	49400	66400	54600
	Կապան	38100	60300	50500
	Միսիան	31000	49700	43000
	Մեղրի	25200	36000	32800
	Ագարակ	18800	23400	21300
	Քաջարան	23100	30350	28200
	Դաստակերտ	6400	6800	6700
Վայոց Ձոր	Վայք	32400	55200	45200
	Եղեգնաձոր	49500	66900	61700
	Ջերմուկ	57000	98700	74800
Տավուշ	Դիլիջան	39000	61500	52300
	Իջևան	47200	81800	63495

	Բերդ	28100	33000	31000
	Նոյեմբերյան	15300	27100	22700
	Այրում	18000	18000	18000

2007թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 19.8%, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 48.3%:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2964 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 560, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2404: 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 2.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 16.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 7.6%-ով: 2006թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 15.4%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 5.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 21.7%-ով:

2007թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2006թ	առաջին կիսամյակ 2007թ	երկրորդ կիսամյակ 2006թ
Կենտրոն	373500	441600	397000
Արաբկիր	291200	351000	314500
Քանաքեռ-Զեյթուն	175000	251100	201900
Նորք-Մարաշ	184000	219200	191400
Ավան	146300	204100	170600
Էրեբունի	144500	216400	172500
Շենգավիթ	175200	229100	194400
Դավթաշեն	179500	238500	202600
Աջափնյակ	164100	221300	183600
Մալաթիա-Սեբաստիա	161300	208300	177000
Նուբարաշեն	104700	123100	115400
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	190800	245800	211000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 16.5%, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 28.8%:

2007թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2006թ.	առաջին կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	59800	99300	75600
	Ապարան	26400	31900	28100
	Թալին	24300	36900	28400
Արարատ	Արտաշատ	45100	79100	59900
	Մասիս	54300	88200	68800
	Վեդի	37800	58800	47500
	Արարատ	39900	57300	47400
Արմավիր	Վաղարշապատ	78500	120700	96900
	Արմավիր	50800	86100	66500
Գեղարքունիք	Սևան	37600	58000	44600
	Գավառ	25400	35900	29600
	Մարտունի	39100	51000	41900
	Վարդենիս	21500	29300	23600
	Ճամբարակ	13900	16800	14900
Լոռի	Վանաձոր	46400	70600	57700
	Ստեփանավան	26800	36500	28600
	Սպիտակ	32100	47200	40100
	Ալավերդի	21100	27400	23100
	Տաշիր	21100	25900	22300
	Թումանյան	6800	7800	7100
	Շամլուղ	4200	5100	4400
	Ախթալա	11900	13600	12300
Կոտայք	Աբովյան	87800	138700	111600
	Նոր Հաճն	60000	97400	75700
	Բյուրեղավան	41700	68800	54400
	Եղվարդ	54800	87200	69800
	Հրազդան	35700	50000	41800
	Ծաղկաձոր	69100	105800	80700
Շիրակ	Գյումրի	47700	67500	55700
	Արթիկ	29700	44300	36000
	Մարալիկ	23300	26900	24200
Սյունիք	Գորիս	50700	69000	56000
	Կապան	39000	63200	51800
	Միսիան	32200	53200	44200
	Մեղրի	26500	38900	33900
	Ագարակ	20600	26100	22500
Վայոց Ձոր	Դաստակերտ	8500	9400	8800
	Վայք	33800	58300	46300
	Եղեգնաձոր	50800	69500	63100
Տավուշ	Զերմուկ	34300	47600	39100
	Դիլիջան	39900	64700	53400

	Իջևան	47900	84100	64600
	Բերդ	29300	35800	32000
	Նոյեմբերյան	16300	29500	23800
	Այրում	19200	19200	19200

2007թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 23.2%, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 50.1%:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 11130 միավոր /8145.99 հա/ հողեր, որից Երևանում՝ 763 միավոր /82.44 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 530 միավոր /142.37 հա/ հողեր, որից Երևանում՝ 253 միավոր /26.06 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5128 միավոր /7338.32 հա/, որից Երևանում՝ 32 միավոր /7.06 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 3742 միավոր /348.84 հա/, որից Երևանում՝ 469 միավոր /41.43 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 2049 միավոր /297.67 հա/, որից Երևանում՝ 245 միավոր /26.38 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 115 միավոր /69.70 հա/, որից Երևանում՝ 17 միավոր /7.57 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 82 միավոր /89.14 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 14 միավոր /2.32 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 10506 միավորի /7866.59 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 706 միավոր /76.77 հա/, նվիրատվության գործարքներ՝ 563 միավոր /266.06 հա/, որից Երևանում՝ 44 միավոր /4.58 հա/ և փոխանակության գործարքներ՝ 61 միավոր /13.34 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /1.09 հա/:

Հանրապետությունում 2007թ. առաջին կիսամյակում, 2006թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 27.8%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 23.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 36.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 52.9 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2971.03 հա, որից 2929.02 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 41.7%-ը կամ 4377 գործարքներ /3808.00 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 263 միավոր /31.07 հա/, իսկ 58.1%-ը կամ 6104 միավորը /4020.43 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 434 միավոր /44.88 հա/: 2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 25 գործարք /38.16 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2007թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունիքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	17	7.57	92	9.79	154	13.72	27	6.13	0	0.00	332	27.40	75	11.36
Արագածոտն	334	700.82	4	1.27	22	2.97	94	2.95	375	464.10	0	0.00	253	24.27	18	1.07
Արարատ	238	332.56	23	9.11	405	39.42	205	8.45	620	327.49	4	0.44	450	40.87	28	1.26
Արմավիր	261	1127.95	14	2.22	9	0.71	82	2.19	622	1801.07	1	0.11	383	35.58	37	1.20
Գեղարքունիք	59	156.39	4	4.98	20	5.81	213	23.95	123	111.14	0	0.00	78	9.43	15	2.67
Լոռի	72	79.59	4	0.14	11	1.20	175	14.48	287	169.21	0	0.00	48	6.53	27	1.27
Կոտայք	410	681.39	11	4.42	150	13.81	301	42.62	792	523.01	3	0.40	807	74.57	66	12.08
Շիրակ	21	16.06	6	32.62	160	6.13	125	4.98	100	117.95	0	0.00	45	4.87	8	0.32
Սյունիք	14	30.91	5	0.69	3	0.20	60	3.82	56	54.85	1	0.16	15	1.36	14	0.58
Վայոց Ձոր	68	224.98	0	0.00	19	1.16	155	74.96	54	41.43	0	0.00	34	3.55	14	35.28
Տավուշ	42	7.90	13	5.08	90	6.98	130	25.71	206	94.54	3	0.23	60	5.26	13	2.55
Ընդամենը	1519	3358.55	101	68.10	981	88.18	1694	217.83	3262	3710.92	12	1.34	2505	233.69	315	69.64

Ստորև ներկայացվում է 2007թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	178	21.22	17	7.57	40	2.73	121	10.92	85	9.86	0	0.00	0	0.00	52	7.06	33	2.80
Արագածոտն	11	0.33	2	0.23	0	0.00	9	0.10	443	707.68	334	700.82	2	1.04	22	2.97	85	2.85
Արարատ	45	1.11	2	0.35	5	0.21	38	0.55	826	388.44	238	332.56	21	8.76	400	39.21	167	7.91
Արմավիր	29	1.68	3	1.16	2	0.21	24	0.31	328	1121.49	252	1118.05	11	1.06	7	0.50	58	1.88
Գեղարքունիք	34	10.22	3	0.30	3	4.17	28	5.75	262	180.91	59	156.39	1	4.68	17	1.65	185	18.19
Լոռի	8	0.14	0	0.00	1	0.09	7	0.05	254	95.28	72	79.59	4	0.14	10	1.11	168	14.44

Կոտայք	49	4.52	2	0.28	11	1.77	36	2.47	821	735.64	408	679.31	9	4.14	139	12.04	265	40.15
Շիրակ	30	32.64	2	32.08	6	0.12	22	0.44	282	27.16	21	16.06	4	0.54	154	6.02	103	4.54
Սյունիք	20	2.45	5	0.69	2	0.10	13	1.66	62	33.17	14	30.91	0	0.00	1	0.10	47	2.16
Վայոց Ձոր	19	2.14	0	0.00	0	0.00	19	2.14	223	298.96	68	224.98	0	0.00	19	1.16	136	72.82
Տավուշ	56	3.35	8	2.48	4	0.18	44	0.69	216	40.52	39	6.10	5	2.60	86	6.80	86	25.02
Ընդամենը	479	79.8	44	45.14	74	9.58	361	25.08	3802	3639.11	1505	3344.77	57	22.96	907	78.62	1333	192.76

Հանրապետությունում 2007թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 14 գործարքներ /13.78 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. առաջին կիսամյակում, 2006թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 92.6%: Ընդ որում Երևանում նվազել է 49.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 93.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 56.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 82.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 2.7 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.9 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	304	578.25	34.4	12381.8	597.6	255	191.50	362.2	6772.5	2521.8
Ապարան						13	12.46	90.6	767.6	357.6
Թային	30	122.57	33.9	130.0	50.6	88	236.67	90.6	758.5	367.5
Ծաղկահովիտ						8	9.90	77.0	948.2	166.2
Արարատի մարզ										
Արտաշատ	79	87.67	36.4	2676.2	1331.0	237	96.35	335.1	5418.0	1367.1
Մասիս	49	63.65	29.9	2400.0	515.6	128	70.44	181.1	6772.5	1748.9
Վեդի	113	181.25	32.9	3057.6	796.2	246	158.20	203.8	4515.0	1163.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	72	343.85	15.1	1537.9	122.1	149	122.78	294.3	4063.5	865.4
Բաղրամյան	85	467.75	22.6	622.1	144.6	156	1467.53	90.6	677.3	545.3
Վաղարշապատ	95	306.45	26.9	2464.0	305.1	291	190.28	443.7	9030.0	1465.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	12	12.31	232.4	233.4	233.1	60	43.29	190.2	496.7	357.5
Ճամբարակ	7	14.60	144.0	364.0	223.1	12	14.14	45.3	541.8	144.7
Մարտունի						12	2.13	45.3	1806.0	466.6
Սևան	10	96.44	327.6	386.3	372.6	9	6.03	45.3	451.5	190.8
Վարդենիս	30	33.05	184.2	495.0	375.4	30	45.56	27.2	532.8	237.1
Լոռու մարզ										
Ալավերդի	65	68.22	210.0	1002.7	322.9	191	100.74	163.0	2483.3	1024.4
Գուգարք						26	22.25	226.4	2709.0	915.8

Սպիտակ	2	2.60	130.0	1140.0	635.0	10	6.51	226.4	1490.0	506.0
Ստեփանավան	4	6.18	450.0	2112.0	1297.7	17	19.82	90.6	2257.5	356.0
Տաշիր	1	2.60	740.0	740.0	740.0	38	16.07	45.3	451.5	199.8
Կոտայքի մարզ										
Արուսյան	151	181.04	34.6	5500.0	473.1	289	124.32	271.7	11287.5	3165.5
Եղվարդ	182	398.49	34.6	8010.0	421.5	423	274.69	172.1	11287.5	2247.3
Հրազդան	75	99.77	54.8	1762.5	240.1	77	123.40	113.2	2709.0	871.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	5.64	140.5	160.0	146.1	50	46.82	249.0	1693.1	438.7
Ամասիա						8	25.36	36.2	237.0	109.6
Անի	9	8.21	77.2	1736.2	291.8	23	18.55	108.7	361.2	227.9
Աշոցք						12	16.64	45.3	112.9	115.1
Արթիկ	8	2.22	188.6	420.0	302.2	5	4.89	63.4	1083.6	167.6
Սյունիքի մարզ										
Գորիս						14	29.08	90.6	673.3	334.4
Կապան	13	30.71	183.6	4800.0	1429.0	5	2.30	54.3	841.6	221.5
Մեղրի	1	0.20	1000.0	1000.0	1000.0	21	4.11	181.1	1784.2	454.0
Միսիան						16	19.35	45.3	631.2	218.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	41	167.72	32.8	635.0	232.8	38	29.21	117.7	2524.8	1264.9
Վայք	27	57.26	19.6	587.9	178.2	13	12.04	54.3	1430.7	501.2
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	496.1	496.1	496.1	52	17.89	45.3	841.6	346.1
Իջևան	35	5.08	440.2	1860.0	789.4	20	8.85	240.0	1683.2	792.7
Նոյեմբերյան	3	0.82	318.8	2655.0	1732.7	1345	67.79	45.3	3509.5	502.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	20	25984.0	112.7	2520.0	418.8	233	215431.0	113.2	3612.0	2245.8
Ապարան						7	8490.0	113.2	632.1	186.0
Թալին	2	3703.0	116.6	116.6	116.6	9	12966.0	45.3	361.2	90.0
Ծաղկահովիտ						4	5770.0	45.3	361.2	68.3
Արարատի մարզ										
Արտաշատ	232	239030.0	145.0	1056.0	336.5	103	109811.0	135.8	2709.0	869.0
Մասիս	110	96071.0	57.2	1623.4	686.1	249	194900.0	135.8	9030.0	1100.6
Վեդի	58	57031.4	173.7	1171.3	609.7	90	94020.0	113.2	993.3	633.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	1250.0	277.2	277.2	277.2	108	110727.8	135.8	2257.5	1037.7
Բաղրամյան						8	10400.0	81.5	270.9	125.1

Վաղարշապատ	6	3760.0	294.0	3828.0	2650.0	265	233711.0	135.8	4515.0	1397.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	54.0	1296.3	1296.3	1296.3	15	13643.0	135.8	903.0	344.5
Ճամբարակ	1	1000.0	90.0	90.0	90.0	4	3803.0	45.3	135.5	93.8
Մարտունի	10	11400.0	42.5	66.7	57.7	35	47431.0	90.6	451.5	220.7
Սևան	3	2000.0	187.4	428.5	359.0	13	13292.3	90.6	903.0	138.1
Վարդենիս	2	2000.0	175.0	175.0	175.0	11	16124.0	45.3	225.8	100.4
Լոռու մարզ										
Այվերդի						14	20110.0	67.9	270.9	119.9
Գուգարք	3	7080.0	67.0	2105.4	957.5	18	29448.0	67.9	2347.8	525.6
Սյիտակ	6	3700.0	55.2	528.0	281.3	7	7950.0	63.4	451.5	118.4
Ստեփանավան	1	341.0	114.4	114.4	114.4	6	6070.0	45.3	270.9	96.3
Տաշիր						1	750.0	45.3	135.5	67.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	79	72961.0	413.3	2425.0	1762.8	395	361061.2	135.8	6772.5	1687.6
Եղվարդ	26	20750.0	1481.3	4749.0	2640.3	348	326868.0	135.8	6772.5	1820.8
Հրազդան	34	26680.0	121.1	1549.8	457.9	59	53645.0	135.8	9030.0	1185.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	109	29243.2	277.3	23333.3	7893.8	30	26540.5	113.2	1535.1	317.4
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի	1	2543.0	115.4	115.4	115.4	3	4529.0	67.9	180.6	94.2
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	44	28390.0	28.8	735.0	223.2	12	17610.0	67.9	925.6	153.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	4001.0	67.9	541.8	226.6
Կապան	1	1019.0	475.0	475.0	475.0	5	3005.0	67.9	632.1	196.7
Մեղրի						4	5340.0	67.9	406.4	110.8
Սիսիան						1	1250.0	67.9	406.4	131.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	18	10880.0	75.6	1150.0	459.9	29	30119.0	67.9	1128.8	268.8
Վայք	1	700.0	447.9	447.9	447.9	3	3780.0	77.0	632.1	112.8
Տավուշի մարզ										
Բերդ						3	1650.0	45.3	632.1	83.0
Իջևան	86	67959.0	222.0	2300.0	1488.7	45	37858.0	67.9	1354.5	380.2
Նոյեմբերյան						11	13020.0	45.3	632.1	122.7

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 14 գործարքներ 2.71 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ Գեղարքունիքի /0.30 հա/, 5-ը՝ Լոռվա /0.27 հա/ և 1-ական՝ Արարատի /0.10 հա/, Սյունիքի /0.20 հա/, Շիրակի /1.84 հա/ մարզերում:

2007թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4867 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.3%: Ընդ որում, վարձակալության գործարքների 45.5% իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2007թ. առաջին կիսամյակում 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 19.3%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 15.7%-ով:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 418 բնակարանների, 177 անհատական բնակելի տների, 1704 հասարակական, 223 արտադրական նշանակության օբյեկտների, 2319 միավոր /24009.96 հա/ հողերի և 26 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 130 վարձակալության գործարքների, այդ թվում 99 միավոր /2.67 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 24.9%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 11.1%-ով:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 24009.96 հա հողերից 24.28 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 23985.69 հա հողերի 94.89 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 19.40 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 14158.34 հա, որից 1954.16 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4449.36 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	5	820.00	256	1440.22
Արարատ	8	330.00	119	323.49
Արմավիր	0	0.00	43	149.34
Գեղարքունիք	51	1562.08	193	442.01
Լոռի	2	270.00	344	1609.23
Կոտայք	5	600.00	70	99.93
Շիրակ	4	30.00	183	1019.20
Սյունիք	8	837.28	80	1116.88
Վայոց Ձոր	0	0.00	21	241.26
Տավուշ	0	0.00	22	81.92
Ընդամենը	83	4449.36	1331	6523.48

2007թ. առաջին կիսամյակում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10343 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 35.6%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 71.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.8%/, առանձնատների /25.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.9%/ և հողերի /11.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4160 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 15.4%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 32.4%-ով:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 3545.35 հա մակերեսով հողեր, որից 60.93 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 88.1% կամ 3121.81 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են

գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2000.46 հա, որից 1999.39 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 36 և 18 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 38.6%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 77.9%-ով: 2007թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 24.1%: 2007թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 10963 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 7.1%-ով, իսկ 2006թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 6.1%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /41.6%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն